ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ԽԱ/27-2025
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
27 նոյեմբերի 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Վարչապետի խորհրդական (խորհրդի նախագահի տեղակալ)	Ա.Թումանյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝

Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Կարապետյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Ա. Դարբինյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ	Վ. Ասցատրյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար)	Ն. Գուլյան
«Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Գասպարյան
«Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Միխայլով
Հայաստանի « Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության անդամ	Մ. Սիմոնյան
Հայաստանի «Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Պողոսյան
«Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Մ. Լազարևա
Երևանի «Պոնտի» հունական հասարակական կազմակերպության անդամ	Մ. Գեորգիադի
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Նամաչևաձե
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահ	Ն. Սպանդերաշվիլի
«Մենորա» հրեական մշակույթի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վայներ
«Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության նախագահ	Ռ. Վարժապետյան
«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Ավդալյան
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վուխրեր
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության անդամ	Մ. Մինասյան
Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության անդամ	Ի. Կոնցևիչ

«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության անդամ	Ա. Հարությունյան
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Հարությունյան

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ	Լ. Գրիգորյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող	Ն. Հովհաննիսյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի փորձագետ	Ջ. Հակոբյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Նիստը վարողի կողմից առաջարկվեց հաստատել խորհրդի նիստի օրակարգը:

Որոշվեց՝ հաստատել օրակարգը

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ 2026 թվականի ՀՀ պետական բյուջեով ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացված 25 մլն դրամ պետական աջակցության բաշխման մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ հաստատել ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների համար նախատեսված 25 մլն ՀՀ դրամի բաշխումը:

Օրակարգային 2-րդ հարց՝

1) հաղորդում՝

ա. ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուների (ասորերեն, եզդիերեն, հունարեն, ռուսերեն և քրդերեն) մասնագետների պատրաստման ծրագրերի և դրանց ծախսերի նախահաշվի վերաբերյալ,

բ. ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուների հեռավար ուսուցման կազմակերպման հնարավորությունների ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ:

Զեկուցող՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լուսինե Գրիգորյան

Որոշվեց՝ հաղորդումն ընդունել ի գիտություն

1. Ընդունել ի գիտություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լուսինե Գրիգորյանի հաղորդումն առ այն, որ ի կատարումն ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի 2025 թվականի ապրիլի 8-ի նիստի ընթացքում տրված հանձնարարության՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն առաջարկում է ստեղծել փոքրամասնությունների լեզուների անհրաժեշտ թվով որակավորված մասնագետների պատրաստման միասնական համակարգ՝ իր կայուն ենթակառուցվածքով: Այդ նպատակով Երևանի պետական համալսարանի հումանիտար հետազոտությունների ինստիտուտի շրջանակներում նախատեսվում է 2026 թվականի հունվարի 1-ից ստեղծել ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող լաբորատորիա: Նշեց, որ անհրաժեշտ ֆինանսական միջոցները Երևանի պետական համալսարանին կհատկացվեն գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակում: Նոր բացվող լաբորատորիայում կիրականացվեն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանն ու որակավորված մասնագետների պատրաստմանն ուղղված աշխատանքներ (որակավորման շնորհմամբ, ինչպես նաև կարճաժամկետ, տեղացի կամ հրավիրյալ մասնագետների միջոցով և այլն, առկա և հեռավար ձևաչափերով), ինչպես նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ուսումնասիրություններ և հետազոտություն-

ներ: Տեղեկացրեց, որ աշխատանքները կիրականացվեն մի քանի փուլով: Նախնական փուլում նախատեսվում է կատարել կարիքների գնահատում, մասնավորապես՝ փոքրամասնությունների լեզուների որակավորված մասնագետների ներգրավում, ինչպես նաև փոքրամասնությունների լեզուների ուսուցման գործընթացի կազմակերպում: Այդ նպատակով կընտրվեն տարբեր ձևաչափեր՝ լրացուցիչ կրթություն (առկա և հեռավար), նշված լեզուների՝ որպես 2-րդ օտար լեզվի ուսուցում և այլն: Ըստ անհրաժեշտության կիրավիրվի համապատասխան մասնագետների թիմ: Հավելեց նաև, որ ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմամբ զբաղվող լաբորատորիայի ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերի ուսումնասիրության խմբի կազմում նախատեսվում է ընդգրկել մի շարք գիտաշխատողներ (այդ թվում՝ մասնագետներ ազգային փոքրամասնությունների համայնքներից): Վերոնշյալ աշխատանքները կազմակերպելիս նախատեսվում է համագործակցել ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կառույցների, հասարակական կազմակերպությունների և համայնքների հետ: Նշված աշխատանքները լիարժեք և արդյունավետ կազմակերպելու համար նախատեսվում է ավելացնել խմբի ղեկավարի (0.5 դրույք), ավագ գիտաշխատողի (1 դրույք) և կրտսեր գիտաշխատողի (0.5 դրույք) հաստիքներ: Լրացուցիչ պահանջվում է 2.460.408 դրամ խմբի ղեկավարի (0.5 դրույք), 3.309.648 դրամ ավագ գիտաշխատողի (1 դրույք) և 2.523.912 դրամ կրտսեր գիտաշխատողի (1 դրույք) տարեկան աշխատավարձերի համար: Ընդհանուր առմամբ ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերի ուսումնասիրության խմբի համար պահանջվում է 8.293.968 ՀՀ դրամ:

Օրակարգային 3-րդ հարց՝ հաղորդում ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամների՝ Արարատի մարզի ասորաբնակ և եզդիաբնակ համայնքներ այցելության մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ ընդունել զեկույցն ի գիտություն

2. Քննարկման ընթացքում ներկայացվեցին նաև հետևյալ էական դիտարկումները՝

1) Վարչապետի խորհրդական, խորհրդի նախագահի տեղակալ Արտաշես Թումանյանն առաջարկեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետին փոքրամասնությունների լեզուների մասնագետների կարիքների գնահատման գործընթացում ներգրավել նաև ՀՀ 11 ազգային փոքրամասնությունները ներկայացնող հասարակական կազմակերպություններին և համայնքներին՝ վերջիններիս կողմից առաջարկություններ ստանալու նպատակով:

2) «Հայաստանի ասորական «Խայաղթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Իրինա Գասպարյանն առաջարկեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետին ազգային փոքրամասնությունների լեզուներով դասավանդողների վարձատրության գումարի չափի ավելացման համար դիտարկել գործակից ներդնելու հնարավորության հարցը:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ) ԱՐՏԱՇԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ